## *5.2.Ժողովրդագրական իրավիճակը*

ՀՀ վարչատարածքային բաժանման համար հիմք է հանդիսացել 1995թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը[1], ըստ որի ՀՀ տարածքը բաժանված է 11 մարզերի, ներառյալ Երևան քաղաքը մարզի կարգավիճակով (12 թաղային համայնքներով), 48 քաղաքային և 866 գյուղական համայնքների:

**ՀՀ վարչատարածքային բաժանումը 2007թ. ապրիլի 1-ի դրությամբ, ըստ մարզերի**

| | Համայնքների թիվը | | | |
|---|---|---|---|---|
| | ընդամենը | քաղաքային | թաղային | գյուղական |
| **Հայաստանի Հանրապետություն** | **926** | **48** | **12** | **866** |
| ք. Երևան | 12 | - | 12 | - |
| Արագածոտն | 114 | 3 | - | 111 |
| Արարատ | 97 | 4 | - | 93 |
| Արմավիր | 97 | 3 | - | 94 |
| Գեղարքունիք | 92 | 5 | - | 87 |
| Լոռի | 113 | 8 | - | 105 |
| Կոտայք | 67 | 7 | - | 60 |
| Շիրակ | 119 | 3 | - | 116 |
| Սյունիք | 109 | 7 | - | 102 |
| Վայոց ձոր | 44 | 3 | - | 41 |
| Տավուշ | 62 | 5[2] | - | 57 |

2007թ. ապրիլի 1-ի դրությամբ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշն ընթացիկ հաշվառմամբ, կազմել է 3222.9 հազ. մարդ, այդ թվում քաղաքայինը՝ 2065.6 հազ. մարդ, գյուղականը՝ 1157.3 հազ. մարդ:

**ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ըստ մարզերի, 2007թ. ապրիլի 1-ի դրությամբ**

*(1000 մարդ)*

| | Ընդամենը | Քաղաքային | Գյուղական |
|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետություն** | **3222.9** | **2065.6** | **1157.3** |
| ք. Երևան | 1105.0 | 1105.0 | - |
| Արագածոտն | 140.0 | 33.0 | 107.0 |
| Արարատ | 275.3 | 81.0 | 194.3 |
| Արմավիր | 280.3 | 99.6 | 180.7 |
| Գեղարքունիք | 239.6 | 79.5 | 160.1 |
| Լոռի | 282.4 | 165.9 | 116.5 |
| Կոտայք | 276.6 | 155.2 | 121.4 |
| Շիրակ | 281.0 | 170.7 | 110.3 |
| Սյունիք | 152.8 | 103.7 | 49.1 |
| Վայոց ձոր | 55.8 | 19.4 | 36.4 |
| Տավուշ | 134.1 | 52.6 | 81.5 |

2007թ. ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը, 2007թ. տարեսկզբի համեմատությամբ փոփոխություն չի կրել, իսկ 2006թ. ապրիլի 1-ի համեմատությամբ աճել է մոտ 4.0 հազ. մարդով:

[1] *Ներառյալ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ 14.12.2004թ. ՀՕ-41-Ն և 13.06.2006թ. ՀՕ-147-Ն ընդունված ՀՀ օրենքները:*

[2] *Վերոնշյալ ՀՀ օրենքով Այրում համայնքի կարգավիճակը փոփոխության է ենթարկվել և գյուղական համայնքից դարձել է քաղաքային:*

2007թ. հունվար-մարտին ՀՀ մշտական բնակչության թվաքանակի աճն ապահովվել է ի հաշիվ բնակչության բնական հավելաճի, որը 2006թ. հունվար-մարտի համեմատ աճել է 11.1%-ով, իսկ միգրացիայի մնացորդի ցուցանիշը պահպանվել է նույն մակարդակի վրա:

2007թ. հունվար-մարտին, 2006թ. նույն ժամանակաշրջանի համեմատ, ծնվածների բացարձակ ցուցանիշի հավելաճը կազմել է 0.8%:

**ՀՀ բնակչության բնական շարժի ցուցանիշները**

| | Հունվար-մարտ | | | |
|---|---|---|---|---|
| | մարդ | | 1000 բնակչի հաշվով, պրոմիլ | |
| | 2006թ. | 2007թ. | 2006թ. | 2007թ. |
| Ծնվածներ | 9172 | 9245 | 11.6 | 11.6 |
| Մահացածներ | 7778 | 7696 | 9.8 | 9.7 |
| Մահացածներից՝ մինչև 1 տարեկան հասակում | 121 | 105 | 13.2[1] | 11.4[1] |
| Բնական հավելաճ | 1394 | 1549 | 1.8 | 1.9 |
| Ամուսնություններ | 4100 | 4421 | 5.2 | 5.6 |
| Ամուսնալուծություններ | 831 | 651 | 1.0 | 0.8 |

2007թ. հունվար-մարտին արձանագրվել է մեռելածնության 129 դեպք՝ 2006թ. հունվար-մարտին արձանագրված 179 մեռելածնության դեպքերի դիմաց:

2007թ. հունվար-մարտին, 2006թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ, մահվան դեպքերը նվազել են 1.1%-ով:

2007թ. հունվար-մարտին ծնվածների թվաքանակը 1.2 անգամ գերազանցել է մահացության դեպքերը:

**Ծնվածների և մահացածների թվաքանակը հունվար-մարտին**




[1] 1000 կենդանի ծնվածի հաշվով:

Բնական հավելաճի գործակիցը, 1000 բնակչի հաշվով, 2007թ. հունվար-մարտին կազմել է 1.9‰ և 2006թ. հունվար-մարտի համեմատ աճել՝ 0.1 պրոմիլային կետով:

2007թ. հունվար-մարտին թեև հանրապետության կտրվածքով արձանագրվել է բնակչության բնական հավելաճ, սակայն ՀՀ Լոռու և ՀՀ Տավուշի մարզերում ամբողջությամբ, ինչպես նաև առանձին վերցրած՝ Գյումրի, Ալավերդի, Ախթալա, Թումանյան, Շամլուղ, Ապարան, Վարդենիս քաղաքներում և Թումանյանի, Գուգարքի, Սպիտակի, Կրասնոսելսկի և Տաշիրի տարածաշրջանների գյուղական համայնքներում արձանագրվել են բնակչության բնական նվազման ցուցանիշներ (մահերը գերազանցել են ծնունդներին):

**ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2007թ. հունվար-մարտին**

*(մարդ)*

| | Ծնված-ներ | Մահա-ցածներ | այդ թվում՝ 0-1 տարեկան հասակում | Բնական հավելաճ | Ամուսնու-թյուններ | Ամուսնալու-ծություններ |
|---|---|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետություն** | **9245** | **7696** | **105** | **1549** | **4421** | **651** |
| ք. Երևան | 2955 | 2530 | 25 | **425** | 1249 | 252 |
| Արագածոտն | 449 | 352 | 6 | 97 | 209 | 19 |
| Արարատ | 834 | 626 | 3 | 208 | 359 | 40 |
| Արմավիր | 785 | 594 | 8 | 191 | 423 | 27 |
| Գեղարքունիք | 775 | 529 | 5 | 246 | 593 | 37 |
| Լոռի | 717 | 833 | 8 | -116 | 391 | 96 |
| Կոտայք | 914 | 605 | 19 | 309 | 397 | 45 |
| Շիրակ | 836 | 764 | 15 | 72 | 369 | 71 |
| Սյունիք | 428 | 330 | 9 | 98 | 176 | 25 |
| Վայոց ձոր | 164 | 130 | 1 | 34 | 79 | 19 |
| Տավուշ | 388 | 403 | 6 | -15 | 176 | 20 |

*(1000 բնակչի հաշվով)*

| | Ծնված-ներ | Մահա-ցածներ | այդ թվում՝ 0-1 տարեկան հասակում[1] | Բնական հավելաճ | Ամուսնու-թյուններ | Ամուսնալու-ծություններ |
|---|---|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետություն** | **11.6** | **9.7** | **11.4** | **1.9** | **5.6** | **0.8** |
| ք. Երևան | 10.9 | 9.3 | 8.5 | 1.6 | 4.6 | 0.9 |
| Արագածոտն | 13.0 | 10.2 | 13.4 | 2.8 | 6.1 | 0.6 |
| Արարատ | 12.3 | 9.2 | 3.6 | 3.1 | 5.3 | 0.6 |
| Արմավիր | 11.4 | 8.6 | 10.2 | 2.8 | 6.1 | 0.4 |
| Գեղարքունիք | 13.1 | 8.9 | 6.5 | 4.2 | 10.0 | 0.6 |
| Լոռի | 10.3 | 12.0 | 11.2 | -1.7 | 5.6 | 1.4 |
| Կոտայք | 13.4 | 8.9 | 20.8 | 4.5 | 5.8 | 0.7 |
| Շիրակ | 12.0 | 11.0 | 17.9 | 1.0 | 5.3 | 1.0 |
| Սյունիք | 11.4 | 8.8 | 21.0 | 2.6 | 4.7 | 0.7 |
| Վայոց ձոր | 11.9 | 9.4 | 6.1 | 2.5 | 5.7 | 1.4 |
| Տավուշ | 11.7 | 12.2 | 15.5 | -0.5 | 5.3 | 0.6 |

2007թ. հունվար-մարտին 2006թ. նույն ժամանակաշրջանի համեմատ մահացության պատճառական կառուցվածքում արձանագրվել է արյան շրջանառության համակարգի, վարակային և մակաբուծային հիվանդություններից մահվան դեպքերի տեսակարար կշիռների նվազում, իսկ շնչառական օրգանների հիվանդություններից, դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից՝ մահացության դեպքերի տեսակարար կշիռների աճ:

[1] *1000 կենդանի ծնվածի հաշվով:*

### Մահացությունն ըստ պատճառների

*(ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ-ի տարածքային բաժիններից ստացված մահվան ակտերի հիման վրա)*

*(մարդ)*

| | 2006թ. հունվար-մարտ | Ընդհանուրի նկատմամբ, % | 2007թ. հունվար-մարտ | Ընդհանուրի նկատմամբ, % |
|---|---|---|---|---|
| **Մահացածների թվաքանակը** | 7778 | 100 | 7696 | 100 |
| *դրանցից՝ըստ պատճառների՝* | | | | |
| արյան շրջանառության համակարգի հիվանդություններից | 4241 | 54.5 | 4143 | 53.8 |
| դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից | 313 | 4.0 | 312 | 4.1 |
| դրանցից՝ սպանություններ | 17 | 0.2 | 14 | 0.2 |
| նորագոյացություններից | 1254 | 16.1 | 1240 | 16.1 |
| շնչառական օրգանների հիվանդություններից | 585 | 7.5 | 582 | 7.6 |
| մարսողական օրգանների հիվանդություններից | 377 | 4.9 | 377 | 4.9 |
| վարակային և մակաբուծային հիվանդություններից | 86 | 1.1 | 58 | 0.7 |
| այլ հիվանդություններից | 922 | 11.9 | 984 | 12.8 |

2007թ. հունվար-մարտին 2006թ. հունվար-մարտի համեմատ արձանագրվել է մինչև 1 տարեկան երեխաների մահացության բացարձակ թվաքանակի նվազում 13.2%-ով, իսկ մանկական մահացության գործակիցը, 1000 կենդանի ծնվածի հաշվով, կազմել է 11.4 ‰՝ 2006թ. նույն ժամանակաշրջանի 13.2 ‰-ի դիմաց:

2007թ. հունվար-մարտին հանրապետությունում արձանագրվել է 0-4 տարեկան երեխաների մահվան 121 դեպք, իսկ մինչև 5 տարեկան երեխաների մահացության կառուցվածքում մինչև 1 տարեկանների մահացությունը կազմել է 86.8%: Մինչև 5 տարեկան երեխաների մահացության գործակիցը (1000 կենդանի ծնվածի հաշվով) կազմել է 13.1‰:

Հանրապետությունում հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում, 2007թ. հունվար-մարտին գրանցվել է մայրական մահացության 2 դեպք, որով պայմանավորված, մայրական մահացության գործակիցը կազմել է 21.6 (100000 կենդանածնի հաշվով):

2007թ. հունվար-մարտին 11.1%-ով աճել են գրանցված ամուսնությունները, իսկ ամուսնության ընդհանուր գործակիցը, 1000 բնակչի հաշվով, կազմել է 5.6‰: 2007թ. հունվար-մարտին ամուսնալուծության դեպքերը նվազել են 21.7%-ով, իսկ ամուսնալուծության ընդհանուր գործակիցը, 1000 բնակչի հաշվով, նվազել է 0.2 պրոմիլային կետով և կազմել 0.8‰:

### Գրանցված ամուսնությունները և ամուսնալուծությունները 2006-2007թթ., ըստ ամիսների



Հանրապետությունում 2007թ. հունվար-մարտին 1000 գրանցված ամուսնական զույգերի համեմատ արձանագրվել է ամուսնալուծության 147 դեպք՝ 2006թ. հունվար-մարտի 203 -ի համեմատ:

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ Ոստիկանության տարածքային անձնագրային բաժինների կողմից տրամադրած տեղեկատվության մշակման արդյունքում (ըստ եկողի վիճակագրական հաշվառման կտրոն՝ ձև թիվ 19-ի և ըստ մեկնողի վիճակագրական հաշվառման կտրոն՝ ձև թիվ 20-ի) 2007թ. հունվար-մարտին արձանագրվել են հետևյալ ցուցանիշները.[1]

ՀՀ միգրացիոն իրավիճակի ընդհանուր բնութագիրը հունվար-մարտին

| | 2006թ. | | 2007թ. | |
|---|---|---|---|---|
| | մարդ | 1000 բնակչի հաշվով | մարդ | 1000 բնակչի հաշվով |
| Ընդամենը՝ | | | | |
| եկողներ | 2278 | 2.9 | 2708 | 3.4 |
| մեկնողներ | 3783 | 4.8 | 4228 | 5.3 |
| միգրացիայի մնացորդ (+/ -) | -1505 | -1.9 | -1520 | -1.9 |

Ըստ նույն աղբյուրի՝ 2006թ. միգրացիոն տեղաշարժերի տարեկան ցուցանիշների մշակման արդյունքում ստացված տվյալները ներկայացվում են ստորև.

Միգրացիոն իրավիճակի բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում

| | 2005թ. | | 2006թ. | |
|---|---|---|---|---|
| | մարդ | 1000 բնակչի հաշվով | մարդ | 1000 բնակչի հաշվով |
| Միգրացիա | | | | |
| եկողներ | 10441 | 3.3 | 9126 | 2.8 |
| մեկնողներ | 18247 | 5.7 | 15844 | 4.9 |
| *միգրացիայի մնացորդ (+/-)* | -7806 | -2.4 | -6718 | -2.1 |
| այդ թվում՝ | | | | |
| Հայաստանի Հանրապետության սահմաններում | | | | |
| եկողներ | 8944 | 2.8 | 7791 | 2.4 |
| մեկնողներ | 8944 | 2.8 | 7791 | 2.4 |
| *միգրացիայի մնացորդ (+/-)* | 0 | | 0 | |
| Միջազգային միգրացիա | | | | |
| եկողներ | 1497 | 0.5 | 1335 | 0.4 |
| մեկնողներ | 9303 | 2.9 | 8053 | 2.5 |
| *միգրացիայի մնացորդ (+/-)* | -7806 | -2.4 | -6718 | -2.1 |
| որից՝ ԱՊՀ երկրներ | | | | |
| եկողներ | 1265 | 0.4 | 980 | 0.3 |
| մեկնողներ | 7459 | 2.3 | 6246 | 1.9 |
| *միգրացիայի մնացորդ (+/-)* | -6194 | -1.9 | -5266 | -1.6 |

[1] *Ցուցանիշները ներառում են նաև ներքին տեղաշարժերը:*

## Միգրացիոն իրավիճակի բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում

| | 2005թ. | | | 2006թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | եկողներ | մեկնող-ներ | միգրացիոն աճը (+) / նվազումը (-) | եկողներ | մեկնող-ներ | միգրացիոն աճը (+)/ նվազումը (-) |
| **Միջազգային միգրացիա** | **1497** | **9303** | **-7806** | **1335** | **8053** | **-6718** |
| այդ թվում՝ | | | | | | |
| **ԱՊՀ երկրներ** | **1265** | **7459** | **-6194** | **980** | **6246** | **-5266** |
| որից՝ | | | | | | |
| Բելառուս | 9 | 174 | -165 | 15 | 147 | -132 |
| Ռուսաստան | 814 | 6256 | -5442 | 590 | 5053 | -4463 |
| Ուկրաինա | 55 | 414 | -359 | 41 | 368 | -327 |
| Վրաստան | 112 | 43 | 69 | 123 | 21 | 102 |
| Ուզբեկստան | 16 | 12 | 4 | 4 | 14 | -10 |
| Ղազախստան | 10 | 93 | -83 | 23 | 97 | -74 |
| Մոլդովա | 3 | 20 | -17 | 6 | 7 | -1 |
| ԼՂՀ | 207 | 439 | -232 | 169 | 530 | -361 |
| **Այլ երկրներ** | **119** | **808** | **-689** | **109** | **735** | **-626** |
| որից՝ ԱՄՆ | 8 | 706 | -698 | 6 | 633 | -627 |
| Կանադա | 0 | 15 | -15 | 0 | 11 | -11 |
| Իսրայել | 1 | 15 | -14 | 0 | 11 | -11 |
| **Չնշվածներ** | **113** | **1036** | **-923** | **246** | **1072** | **-826** |

## ՀՀ միգրանտների բաշխումն ըստ սեռի և հիմնական տարիքային խմբերի, 2005 և 2006թթ.

| | Եկողներ[1] | | | Մեկնողներ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ընդամենը | արական | իգական | ընդամենը | արական | իգական |
| **2005թ.** | | | | | | |
| **Քաղաքային** | **5769** | **2173** | **3596** | **6492** | **2618** | **3874** |
| 0-15 տարեկան | 1028 | 539 | 489 | 1055 | 604 | 451 |
| աշխատունակ տարիքի | 4193 | 1426 | 2767 | 4848 | 1787 | 3061 |
| աշխատունակ տարիքից բարձր | 548 | 208 | 340 | 589 | 227 | 362 |
| *16-29 տարեկան* | *1765* | *521* | *1244* | *1614* | *507* | *1107* |
| **Գյուղական** | **4672** | **1649** | **3023** | **2811** | **1091** | **1720** |
| 0-15 տարեկան | 771 | 435 | 336 | 727 | 412 | 315 |
| աշխատունակ տարիքի | 3502 | 1040 | 2462 | 1909 | 612 | 1297 |
| աշխատունակ տարիքից բարձր | 399 | 174 | 225 | 175 | 67 | 108 |
| *16-29 տարեկան* | *1581* | *392* | *1189* | *722* | *166* | *556* |
| **2006թ.** | | | | | | |
| **Քաղաքային** | **5128** | **1904** | **3224** | **5746** | **2374** | **3372** |
| 0-15 տարեկան | 889 | 484 | 405 | 906 | 500 | 406 |
| աշխատունակ տարիքի | 3804 | 1258 | 2546 | 4380 | 1702 | 2678 |
| աշխատունակ տարիքից բարձր | 435 | 162 | 273 | 460 | 172 | 288 |
| *16-29 տարեկան* | *1547* | *460* | *1087* | *1400* | *482* | *918* |
| **Գյուղական** | **3998** | **1441** | **2557** | **2307** | **880** | **1427** |
| 0-15 տարեկան | 672 | 352 | 320 | 530 | 295 | 235 |
| աշխատունակ տարիքի | 2984 | 954 | 2030 | 1636 | 521 | 1115 |
| աշխատունակ տարիքից բարձր | 342 | 135 | 207 | 141 | 64 | 77 |
| *16-29 տարեկան* | *1260* | *334* | *926* | *610* | *149* | *461* |

[1] *Այդ թվում ներհանրապետական տեղաշարժերը:*